

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2013

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրում պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ել*.

- 1) թ-աթափ, համա-րուպական, վագ-ագ, ուղ-արձ
- 2) կար-եր, հոգ-արք, գեր-արել, դափն-արդ
- 3) ուղ-որվել, ոսկ-ագ, սեթ-եթել, օթ-ան
- 4) ոսկ-որել, ուղ-ճար, տար-երջ, գին-աճառ

2 Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերում է գրվում *ճ*.

- 1) վար-ակ, որ-կալ, հերար-ակ, ձոր-
- 2) խոտհուն-, որ-աքար, երկնաբեր-, վար-կան
- 3) կաղկան-, դեղ-անիկ, քուր-, դաղ-
- 4) դիմադար-, բար-իթողի, խուր-, փղ-կալ

3 Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում *ղ* .

- 1) Ա-թամար, բո-կ, պ-տոր, նա-շուն
- 2) գա-տնիք, կո-պեք, կե-տոտ , դժո-ք
- 3) հա-թանակ, կմա-ք, սանդու-ք, ընձու-տ
- 4) փո-կապ, տա-տկալի, գա-տագողի, կա-կանձել

4 Ո՞ր շարքի բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա.

- 1) ք-ախույզ, վշտա-ուկ, խճու-ի, բե-իություն
- 2) ու-ալար, հակըն-եմ, մ-կաշունչ, հո-երգություն
- 3) գործու-ում, բու-այական, ու-ափառ, հե-են
- 4) օ-ան, տա-երք, ու-ակի, տա-ալուծել

5 Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով:

- 1) ՇԻՐԱԿԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, ՇՊԻՑԲԵՐԳԵՆԻ ԱՐՇԻՊԵԼԱԳ, ՇԱՄԻՐԱՄԻ ԿԱԽՈՎԻ ԱՅԳԻՆԵՐ, ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
- 2) ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆ, ՉՈՒԿՈՏՅԱՆ ԾՈՎ, ՉԻՆԱԿԱՆ ՊԱՐԻՍՊ, ՊԱՆԱՍՏՅԻ ՋՐԱՆՑՔ
- 3) ՎԱՆԱ ԼԻՃ, ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏ, ՊԱՐԱԳՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱԼՊՅԱՆ ԼԵՌՆԵՐ
- 4) ՊՐԺԵՎԱԼՍԿՈՒ ՉԻ, ՌԻՅԱ ԼԻՃ, ՊԻՐԵՆԵՅԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ, ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՅԻ

6 Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում *անջատ*.

- 1) կաս(կարմիր), ամեն(մի), ծայրից(ծայր), այսօր(ևեթ)
- 2) առ(այն), ավար(առու), գլուխ(գլխի), դժվար(թե)
- 3) հնուց(ի)վեր, ըստ(իս), գին(ծառայող), թույլ(տալ)
- 4) ինչ(որ)է, ի(սկզբանե), ըստ(այդմ), սակավ(առ)սակավ

7

Ո՞ր շարքի բոլոր բառերում երկհնչյունի հնչյունափոխություն կա.

- 1) վարագուրել, զգուշավոր, բուսաբույժ, առօրեական
- 2) լուսավորիչ, արնակոլոլ, ուխտադրժորեն, գործունեություն
- 3) ատենադպիր, բուսակեր, սառցահատ, քնքշություն
- 4) թունավոր, մատենագիր, կարգալույծ, ձնաբուք

8

Ո՞ր շարքի բոլոր բառերում կա արմատի հնչյունափոխություն.

- 1) գետնաքարշ, գիտնական, հնձվոր, խուսափել
- 2) վերջնագիծ, քննություն, լսափող, նստարան
- 3) լրջախոհ, նկարչական, ուղեկից, շրջադարձ
- 4) օրինապահ, ուսուցիչ, կավճոտ, սուգանավ

9

Համարակալված բառերից ո՞րը հոմանիշ չէ մյուսներին.

- 1) այգ
- 2) արևագալ
- 3) արշալույս
- 4) վաղորդյան

10

Ընդգծվածներից ո՞րն է մյուս երեքին համանուն:

- 1) Հրի լեզուները լափեցին երբեմնի հզոր ու հարուստ քաղաքը:
- 2) Եթե հրի չմատնեին քաղաքը, զուցե մեծ ավարի տիրանային:
- 3) Եթե ամբողջ ուժով հրի փակված դուռը, զուցե կարողանա տապալել այն:
- 4) Նա բանտարկված է իր շուրջը տարածվող հրի պատճառով:

11

Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերջածանցավոր.

- 1) երկաթյա, ազդու, առու, ջլուտ
- 2) լավություն, փեսացու, դանակ, ձեռք
- 3) տարեկան, բացատ, գյուղացի, նորագույն
- 4) հոտավետ, գործոն, գառնարած, խորոված

12

Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ.

- 1) երկաթուղի, միջնապատ, զբոսայգի, խորագնին
- 2) խմբագրատուն, մեծ-մեծ, մրցադաշտ, անցուդարձ
- 3) ձիարշավ, հանքափոր, հոգեբույժ, սրտաբաց
- 4) մեղմանուշ, երգչախումբ, շուրջպար, ընչագուրկ

13

Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում-ներ վերջավորությամբ.

- 1) տոնացույց, որդեգիր, կաթնասուն, մեներգ
- 2) նավավար, հետախույզ, անցաթուղթ, սառցահատ
- 3) օրապահ, սրունք, գրաբեր, արքայադուստր
- 4) հանքափոր, պատճեն, տակդիր, դասալիք

14

Թվարկված գոյականներից քանի՞սն են ենթարկվում ներքին հոլովման:

Քույր, մորեղբայր, մահ, դերանուն, ուսուցում, գերություն, հենասյուն, արարում, ադամաթուզ, ջրշուն:

- 1) հինգը
- 2) վեցը
- 3) չորսը
- 4) երեքը

15

Ո՞ր նախադասության մեջ ածական կա:

- 1) Վիճակի անորոշությունից քահանան, որ մշտապես հուսադրում էր ուրիշներին, ինքը կորցրել էր ինքնավստահությունն ու վճիռ կայացնելու կարողությունը:
- 2) Ճենարանից այդ տարի նույնպես հրավեր չեկավ, և օգոստոսի վերջին գյուղի արդեն հոգնած, ճռռացող սայլը տեր Սուքիասին ու Վահանին տարավ Թիֆլիս:
- 3) Այս անգամ հայրը ուր գնար, տղային տանում էր հետը, իսկ Թիֆլիսն իր՝ հրաշքի մմանվող կյանքով շարունակում էր զարմացնել տասներկուամյա տղային:
- 4) Արամի հետ ապրող տղաները մտերմաբար էին վերաբերվում Վահանին, նույնիսկ Նիկողոսը, որ առանձնանում էր ժլատությամբ, իր կողպած սնդուկից հաճախ միրգ էր հանում և հյուրասպիրում նրան:

16

Քանի՞ տեսակ դերանուն կա տրված բանաստեղծական հատվածում:

Բուքն է գալարվում խրոխտ ու արի,
Դաշտով սուրում է կառքը օտարի,
Այդ կառքում օտար մի ջահելություն,
Ո՞ւր էս դու, բախտ իմ, ո՞ւր էս, խնդություն:
Ամեն ինչ կորավ բուքի գալարում,
Հենց մի այսպիսի կատաղի կառքում:

- 1) երեք
- 2) չորս
- 3) հինգ
- 4) վեց

17

Ո՞ր շարքում սուկածանցավոր բայ չկա.:

- 1) կառչել, սպանել, ուռչել, սպառնալ
- 2) հազնել, երկնչել, հարցնել, խլանալ
- 3) մատնել, հնչել, գինել, խթանել
- 4) ընկնել, շնչել, կոչել, հոգնել

18

Ո՞ր նախադասության մեջ ապակատար ձևաբայ (կախյալ դերբայ) կա:

- 1) Հասկացրո՛ւ նրանց, որ մարդը ազատ պիտի լինի, որ ոչ ոք իրավունք չունի ուրիշի իրավունքը ջնջելու:
- 2) Մտազբաղ թափառում էր նա և խորհում էր, թե ինչ ելք գտնի՝ աշխարհը փրկելու համար:
- 3) Այն թռչող վայրկյանը, որ մարդիկ կյանք են անվանում, հավերժական է թվում այս խեղճերին. սակայն տեսնենք՝ ինչ է վաղը լինելու:
- 4) Ես ձեզ ազատության խոսք եմ շեփոքում. գնանք, խլենք մեր ապրելու իրավունքը, մեր իշխելու իրավունքը, մեր ազատությունը:

19 Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:

- 1) Ինձ չեն հասկանում:
- 2) Նունուֆարը վախից կանգ առավ:
- 3) Մենք կապոցները վերցրինք:
- 4) Բոլորը գլուխ էին պահում:

20 Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:

- 1) Առավոտյան նրա ուղարկած մարդիկ էին հավաքվել Էջմիածնում՝ Մայր տաճարի պատերի տակ:
- 2) Վերջում դուրս էին հանում այդ գործի հետ որևէ առնչություն չունեցողներին:
- 3) Այդ արևագոծ օրերին սահմուկեցնող էր ալիքների շառաչումը՝ խոյընթաց և մրրկահույզ:
- 4) Լույսը պիտի ներս ընկներ առաստաղի ձվածկ անցքերից՝ դահլիճում ստեղծելով խորհրդավոր կիսամութ:

21 Ո՞ր նախադասության մեջ հատկացուցիչ կա:

- 1) Չեռքին բռնած կրակխառնիչը՝ երիտասարդը կանգնել էր բուխարու առջև:
- 2) Գողտրիկ հուշարձանի կողքին կանգնել էր Մարանը:
- 3) Վաղորդյան արշալույսին նրանք վրաններ խփեցին անհյուրընկալ լեռան գագաթին:
- 4) Քո երգելու ժամանակ դահլիճը հնայված ունկնդրում էր:

22 Ո՞ր նախադասության մեջ ուղիղ խնդիր կա:

- 1) Նրա գրասենյակի ողջ կահկարասին մի խարխուլ սեղան էր, մի աթոռ՝ հազար ու մի թելերով կապկպած, մի թանաքաման և դիմումների համար թղթեր:
- 2) Ժառանգական և ամուսնական դատերի համար աղերսագրերը նա արտագրում էր մի հաստափոր գրքից՝ փոխելով անուններն ու թվականները:
- 3) Սենյակի անկյունում մի ավել կար, որ անգործածելի լինելու պատճառով դարձել էր սարդի բույն:
- 4) Այդ մասին խոսելիս հորաքույրս ախ էր քաշում, և պատրաստ էր արցունքը, որ թափվում էր սև, ծալքոտած այտերի վրա:

23 Ո՞ր նախադասության մեջ պարագա չկա:

- 1) Որտեղի՞ց եկանք և ո՞ր ենք գնում, Երեկ չկայինք, վաղը չենք լինի:
- 2) Ինչո՞ւ ապշած են, լճակ, Ու չեն խայտար քո ալյակք:
- 3) Եվ ծլվլաց աշխարհով մեկ Լույսը առավոտի:
- 4) Օրը գնաց հավասարվեց Հազար տարվա մեռելներին

24

Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:

Միջագետքի ավազուտներում (1) քաղցած ու բորիկ դեպի անհայտություն էին քայլում հայերի (2) թուրքական յաթաղանից հալածված (3) վերջին բեկորները: Թվում էր (4) փշրվեց այրվեց ամեն ինչ (5) հող հայրենիք հույս: Ծերունի ուսուցիչը (6) իր շուրջը հավաքելով ողջ մնացած հատուկներն մանուկներին(7) ձեռնափայտով օտար ավազներին գծում էր մեսրոպյան գրերը (8) ջանալով մանուկների հոգում դրոշմել դրանք (9) որպես վերասպրումի թախաման :

- 1) 1, 2, 3, 5, 7
- 2) 2, 4, 5, 8, 9
- 3) 1, 2, 4, 6, 7
- 4) 2, 3, 6, 7, 8

25

Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:

Հովհաննիսյանը (1) ի տարբերություն մյուսների (2) նոր կարգերից չէր բողոքում (3) միայն նեղվում էր այդ տարիքում գաղթական դառնալու համար: Քաղաքականությունից խոսք բացվելիս (4) փորձում էր Վահանից իմանալ (5) ինչ լուծում են տալու բոլշևիկները այս կամ այն հարցին: Այդ հարցերի մեջ ամենակարևորը թե նրա (6) և թե ընկերների համար իրենց ողբացյալ հայրենիքի Հայաստանի (7) ճակատագիրն էր: Երբ Վահանը (8) ամեն ինչ հուսադրող շեշտերով ներկայացնելով (9) պարզաբանումներ էր անում Հովհաննիսյանը քթի տակ ժպտալով (10) լսում էր:

- 1) 1, 2, 3, 8, 9, 10
- 2) 2, 4, 5, 6, 7, 10
- 3) 1, 2, 4, 8, 9
- 4) 2, 3, 5, 7, 8, 10

26

Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:

Պտույտ է գալի ծաղիկ տիրուհին,
Անցնում է, հրսկում սեղաններն ամեն,
Հորդորում, խընդրում, որ ուրախ լինին,
Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:

- 1) մակդիր
- 2) փոխանունություն
- 3) հանգավորում
- 4) համեմատություն

27

Բառարանների ո՞ր տեսակին է պատկանում Հ. Աճառյանի «Արմատական բառարանը».

- 1) կենսագրական
- 2) հանրագիտական
- 3) ստուգաբանական
- 4) ուղղախոսական

28

Տողերի դասավորության ո՞ր տարրերակն է ճիշտ:

ա. Չայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն
բ. Ի ստրկաց կարգի պահել
գ. Կամ ծառայեցուցանելով
դ. Եվ թշնամութիւն յավիտենական
ե. Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել
զ. Չի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց

- 1) ա, բ, գ, դ, ե, զ
- 2) գ, ա, գ, բ, դ, ե
- 3) ա, գ, գ, բ, ե, դ
- 4) ե, դ, գ, բ, գ, ա

29

Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

Բուրում էր նա կնդրուկի պես
Աստվածային հրով լցված մի բուրվառի.
Չայնն էր մեղուշ, քաղցրանվագ:
Չարդարված էր պատմունճանով գեղեցկատես,
Որ բեհեզի կապույտ, որդան ու ծիրանի
Գույներով էր ոսկեշողում...

- 1) «Ռավեննայում», Ավետիք Իսահակյան
- 2) «Մեղեդի ծննդյան», Գրիգոր Նարեկացի
- 3) «Fatum», Վահան Տերյան
- 4) «Հեռացումի խոսքեր», Եղիշե Չարենց

30

Տրված հատվածը Միքայել Նալբանդյանի ո՞ր բանաստեղծությունից է:

Ես պիտի դուրս գամ դեպ հրապարակ
Առանց քնարի, անզարդ խոսքերով,
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խավարի ընդդեմ պատերազմելով:

- 1) «Ազատություն»
- 2) «Ապոլլոնին»
- 3) «Իտալացի աղջկա երգը»
- 4) «Մանկության օրեր»

31

Պետրոս Դուրյանի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:

Աստղ մ'ալ ես կ'երթամ հավելուլ երկնից,
Աստղերն ի՞նչ են որ, եթե ո՛չ անբիծ
Եվ թշվառ հոգվոց անեծք ողբագին,
Որք թռռին այրել ճակատն երկնքին...

- 1) «Լճակ»
- 2) «Միրել»
- 3) «Տրտունջք»
- 4) «Իմ ցավը»

32

Տրված հատվածը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեպի ո՞ր հերոսի արտաքինի նկարագիրն է.

«Երիտասարդ մը, որ վաճառականի չէր նմաներ, սեղանավորի ալ չէր նմաներ, արիեստավորի ալ չէր նմաներ, գործավորի ալ չէր նմաներ և վերջապես անանկ բանի մը կնմաներ, որուն նմանը չկա: Հազիվ երեսուներկու տարեկան կը թվեր: ...Ուներ նաև երկու մատ մորուք, որ մայրաքաղաքիս մեջ կամ սգո նշան է և կամ չքավորության: Հագուստներն այնքան հին էին, որ հնախույզները զանոնք գնելու համար մեծաքանակ գումար մը կուտային»:

- 1) խմբագրի
- 2) բժշկի
- 3) բանաստեղծի
- 4) դերասանի

33

Ստեղծագործություններից քանիսի՞ հեղինակն է Գրիգոր Չոփրապը:

«Այինկա», «Այրին», «Գելը», «Համբերանքի չիբուխը», «Նամուս», «Ոսկի աքաղաղ», «Սալբի», «Փոստալ», «Երկու տող», «Չարուղոն», «Երջանիկ մահը», «Ավելորդը», «Ճիտին պարտքը»:

- 1) չոփրի
- 2) հինգի
- 3) վեցի
- 4) յոթի

34

Ո՞ր բառն է բաց թողած:

Ո՛վ քաղցրությունը նայվածքին իր ծաղիկ.
Ո՛վ պերճությունը իր հըպարտ.
Ճամբուն վըրա՝ իր քայլերուն հետքը վարդ,
Ուր հեշտորեն կը հաժի դեռ իմ մենիկ....

- 1) նազանքին
- 2) հայացքին
- 3) աչքերուն
- 4) գընացքին

35

Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

Կյանքս, որ հուշ է դարձել, հեռանալիս չանիծես.
Կյանքս կանցնի, կմարի, բայց երգս կա, կապրի դեռ:

- 1) «Գանգրահեր տղան»
- 2) «Հեռացումի խոսքեր»
- 3) «Դանթեական առասպել»
- 4) «Տաղ անձնական»

36 Ո՞ր հատվածը Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմից չէ:

- 1) Ու կռվի դաշտում շահի առաջին Արին մի անգամ գովքը սիրունի. Նրան՝ իր տեսքով, հասակով, ասին, Չի հասնի չքնաղ հուրին Իրանի:
- 2) Պտույտ է գալի ծաղիկ տիրուհին, Անցնում է, հսկում սեղաններն ամեն, Հորդորում, խնդրում, որ ուրախ լինին, Որ լիքն ու առատ բաժակներ քանեն:
- 3) Աշխարհքում հաստատ չկա ոչ մի բան, Ու մի՛ հավատալ երբեք ոչ մեկին. Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ հաղթության, Ոչ սիրած կնկա տված բաժակին...
- 4) Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին. Նա՛ կավատ, վարար, մի չքնաղ դժոխք, նրա բերանով Իբլիսն է խոսում:

37 Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:

ա. Կարծես թե սիրո քնքուշ խոսք ասաց նիրհող դաշտերին
բ. Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին
գ. Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց
դ. Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շշուկաց

- 1) ա, գ, դ, բ
- 2) դ, բ, գ, ա
- 3) բ, ա, դ, գ
- 4) դ, ա, գ, բ

38 Ակսել Բակունցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

«Այդ ամենը կատարվեց մի վայրկյանում: Հաջորդ վայրկյանին մարդը գազազած արջի նման ուստյուն արեց, նրա մագոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակը անասելի թափով իջավ կնոջ թիկունքին»:

- 1) «Մթնաձոր»
- 2) «Ալպիական մանուշակ»
- 3) «Միրհավ»
- 4) «Խոնարհ աղջիկը»

39 Տրված բառերից քանիստ՞ն չի գրվում *բ*.

ա-համարիել, կ-ծել, գ-գիռ, զանգու-, նրմու-, ախո-ժակ, խ-ճիթ, ե-եսուն, գա-շելի, ա-ժանի, մա-մա-, փ-փ-ել, խա-նիխումն, գո-շ, ա-ծիվ, փ-փ-ալ:

40 Բառերից քանիստ՞ն առաջին արմատն է միավանկ.

կուսակցական, կրավոշի, գնդասեղ, թիավարել, ալեծուփ, տղամարդ, մորաքույր, մտահայեցություն, ավարառու, փախստական, կետորսանավ, մշտադալար:

41 Բառերից քանիստ՞ն են *հողակապով*.

լուսանցք, բառախաղ, վայրէջք, ինքնաեռ, գինեմոլ, հարսնատես, սևերես, լուսաշող, այրուձի, մարդանման:

42 Տրված բառերից քանիստ՞ն են կապ.

վաղ, տակ, հետ, դեպի, ապա, իր, այլևս, ուրեմն, առթիվ, նույնիսկ, կամ:

43

Մահմանական եղանակի քանի՞ բաղադրյալ ժամանակաձև է գործածված տրված տեքստում:

Ծերունին երկար գամվել էր ջրելքի անցքին. ջուրը ճողփալով դուրս էր հորդում: Հետո նա քրթմնջաց, և այն, ինչ նա ասում էր, շատ ավելի մենախոսություն էր. «Դու, որ քո կյանքի համար մկան ծակին տասը շահի ես տալիս, ուրիշ կյանքերի հետ ո՞նց ես միլիոնատիրոջ խաղեր խաղում»: Եվ նա չգիտի, թե այս մարդը, որ տասը հազար տարի աղ է կերել, ինչու էլի նույն անալի վայրենին է:

44

Նշել տրված նախադասությունների ենթակայաների քանակը:

1. Հիմի բացել են հանդես,
Երգիչները իմ անտես,
Ջա՛ն, հայրենի՛ ծղրիղներ,
Ո՞վ է լսում հիմի ձեզ:
2. Կյանքից հարբա՛ծ անցավոր,
Ահա դարձյալ անցավ օր,
Դու վազում ես դեպի մահ,
Մահը բռնում հանցավոր:
3. Հոգիս տանը հաստատվել,
Տիեզերքն է ողջ պատել,
Տիեզերքի տերն եմ ես,
Ո՞վ է արդյոք նկատել:
4. Մեռա՛ն, մեռա՛ն... Եվ ահա
Խառնվել են կյանք ու մահ,
Չեմ հասկանում աշխարհքի
«Կան ու չկան» ես հիմա:
5. Հե՛յ, ճամփանե՛ր, ճամփանե՛ր,
Անդարձ ու հի՛ն ճամփաներ,
Ովքե՞ր անցան ձեզանով,
Ո՞ր գնացին, ճամփանե՛ր:

45

Համարակալված բառերից որո՞նք են իրար հականիշ.

1.ուռուցիկ, 2.տեղյակ, 3.գոգավոր, 4.իրազեկ, 5.գագաթ, 6. գառիվեր

46

Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում դերբայական դարձվածի պաշտոնը սխալ է նշված:

1. Անպարփակ վիշտը հոգու մեջ ամփոփած՝ նա անդադրում թափառեց օտար ժողովուրդների հայրենիքներում, ցավակից եղավ անօգ աղամորդուն: (*ձևի պարագա*)
2. Ամբոցի՛ վիհի վրա կիսով չափ ձգված հարկաբաժնի մի սենյակում բազմել էր մի մարդ: (*որոշիչ*)
3. Պարսպապատի վրայից գինվորները տեսան մի խուսբ հեծյալների՝ ամբոցին արագ մոտենալը: (*ենթակա*)
4. Կենսաթրթիռ ավյունով զարթնած՝ դաշտավայրը գրկաբաց ողջունում էր հանապազօրյա կյանքին: (*որոշիչ*)
5. Արտակը մոտ գնաց պատուհանին, փոքր-ինչ ձգվեց առաջ՝ ճանաչելու մոտեցողներին: (*նպատակի պարագա*)

47

Ո՞ր նախադասություններում կետադրական սխալ չկա /նշել համարները/:

- 1) Կամսարյանը, հանկարծակիի եկած, մի վայրկյան մնաց անխոս, ապա նորից սկսեց նայել շուրջը՝ տեսնելու այն, ինչ որ գյուղացին «գյուղ» էր անվանում:
- 2) Վերջինս տան աղյուսե պատին հենելով ձեռքի փոցխը՝ անշտապ մոտեցավ հյուրին՝ քաղցրաժպիտ ողջունելով և տուն հրավիրելով նրան:
- 3) Թագուհու՝ երկնավառ քարերից կերտված բարեգարդ առանձնարանը լուսավորվելով երևան հանեց հինավուրց արվեստի նրբաճաշակ պերճանքը:
- 4) – Մա՛յր Սեղա, - լռությունը խախտեց թագուհին, - հիշո՞ւմ ես՝ մեկ-երկու ժամ առաջ հովանոցում ասացիր, թե վաղուց հայտնի է քեզ՝ ինչ վիշտ է կրծում իմ սիրտը, բայց չես համարձակվել խոսել՝ հավատացած լինելով՝ դրանով իմ վերքերը պիտի նորոգես:

48

Նշի՞ր թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը.

- 1) Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը կազմակերպել էր փայլուն ընդունելություն: Կայարանում պատրաստված էր թեյասեղան: Համալսարանի դահլիճը զարդարված էր կանաչով ու դրոշակներով, նվագում էր գինվորական խումբը:
- 2) Հանդեսը բացեց համալսարանի տեսուչ, վաստակավոր գիտնական պրոֆ. Ի.Ղամբարյանը, որից հետո նախարար Ն. Աղբալյանը մի ընդարձակ ու կուռ ճառով վեր հանեց համալսարանի դերը հայ պետականության ու մշակույթի զարգացման գործում: «Այն ջահը,- ասաց նա,- որ մենք վառում ենք այսօր Հայաստանի բարձրավանդակի վրա, չի հանգչի երբեք և կլուսավորի Առաջավոր Ասիան»:
- 3) Հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում՝ Հայաստանի «երկրորդ մայրաքաղաքում», տեղի ունեցավ Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացումը: Երևանից և Թիֆլիսից հատուկ զնացքներով եկել էին բազմաթիվ հյուրեր՝ Խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը, վարչապետ Ա. Խատիսյանը, բրիտանական ներկայացուցիչ Օ. Ուորդրոպը, կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանը, արդարադատության նախարար Ա. Չիլինգարյանը, համալսարանի ուսուցչապետները՝ պրոֆ. Ղամբարյանի գլխավորությամբ, բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանը և պետական ու հասարակական, գրական ու գիտական շատ ուրիշ դեմքեր:
- 4) Հանդեսի ամբողջ տևողության ընթացքում դուրսը խոնաված էր մեծ բազմություն. շատերը եկել էին շրջակա գյուղերից: Հասարակությունը խանդավառ ցույցերով ընդունեց հանդեսից հետո դուրս եկող հյուրերին: Երեկոյան առևտրական դպրոցի սրահում կայացան գրական-երաժշտական երեկույթ և պարահանդես, որ տևեց մինչև ուշ գիշեր: Պարահանդեսից հետո հյուրերն արտակարգ զնացքով վերադարձան Երևան:

49

Տրված հատվածներից որո՞նք են գրաբար:

- 1) Բարեկամութիւնն ալ ատանկ է. հարկ է, որ ան խորտակուի, որպէսզի կորուստին մեծութիւնը կարենանք զգալ և չափել:
- 2) Չիմ եարն ամանաթ կուտամ, ի վարդին մէջըն պահեցեք, Թե երբամ խարիպուկ մեռնիմ, վարդըն ձեզ, գտերն յիշեցեք:
- 3) Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, Տեղայր մարգարիտ ի հարսնութեանն Սաթինկանն:
- 4) Քանի գուզե քամին տանե՝ ծովեմեն ավազ չի՛ պակսի.
Թեգուզ ըլիմ, թեգուզ չըլիմ՝ մեջլիսներուն սագ չի՛ պակսի...

50

Նշի՞ր այն բոլոր ուսումնական հաստատությունները, որտեղ սովորել է Վահան Տերյանը.

- (1) Գանձայի պետական դպրոց, (2) Մոսկվայի Լազարյան ճեմարան, (3) Սկյուտարի ճեմարան, (4) Վենետիկի Ռաֆայելյան դպրոց, (5) Սանկտ Պետերբուրգի համալսարան, (6) Թիֆլիսի Ներսիսյան դպրոց

Բ մակարդակ

51 Ո՞ր շարքում է սխալ նշված տառակապակցության թվային արժեքը.

- 1) ԾԸ-58
- 2) ՇԷ-507
- 3) ՉՀԷ-777
- 4) ԴԸ-88

52 Ո՞ր նախադասության մեջ հնչյունափոխված բառ կա:

- 1) Դ-ա հայոց բանակն էր, որ երեք օր անընդհատ թեթև դադարներով ճանապարհ անցնելուց հետո հանգիստ էր առնում:
- 2) Երևում էին նաև վրանների շուրջը անցուդարձ անող պահակներ՝ գորշավուն վերարկուներով:
- 3) Բայց մի առավոտ հանկարծ Սահակը արթնացավ թխկոցի ձայնից, հագնվեց արագ ու դուրս վազեց:
- 4) -Ի՞նչ ես անում, որդի՛ս,- հարցրեց նա մի խուլ, զարմանքից դողացող ձայնով:

53 Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա.

- 1) չվացուցակ, ճարպկություն, ծանրամարտ, տարկետում
- 2) մարմնամարզուհի, պտուտակ, ընդեղեն, մանրադիտակ
- 3) անընդմեջ, իշայծյամ, փոթորկահույզ, բուժքույր
- 4) գեղջկական, օրհներգություն, ծննդատուն, պատմագիտություն

54 Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված արտահայտությունը գործածված ոչ դարձվածային իմաստով:

- 1) Ազատագրական պայքարում հաջողության հասնելու համար անհրաժեշտ է, որ բոլոր ազգային կուսակցությունները **մի դրոշի տակ հավաքվեն**:
- 2) Մեր **դռները բաց են** բոլոր նրանց առաջ, ովքեր ցանկություն ունեն մեզ հետ համագործակցելու:
- 3) Այդ երգչուհին մեզ արդեն ձանձրացրել է բոլոր համերգներին **նույն երգը երգելով**:
- 4) Նա իր առաջին իսկ ստեղծագործությամբ **նոր էջ բացեց** մեր արձակում:

55 Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են բարդածանցավոր.

- 1) ռազմերգու, ջղաձգորեն, ընչազրկում, երկերեսանի
- 2) միաձուլում, մեղսունակ, ուսումնասեր, նույնահնչյուն
- 3) թիկնոցավրան, սպիրտայրոց, յուղաքսուք, նավթապահեստ
- 4) արյունազեղում, հաղթաբազուկ, աչառու, նեղաչք

56 Ո՞ր շարքի բոլոր բառերն են խառը հապավումներ:

- 1) մեխմաթ, շինհրապարակ, Չորահէկ, մուլտֆիլմ
- 2) մեթոդիավորում, քիմմաքրում, տնտեսվար, քիմֆակ
- 3) պետհամալսարան, բնակվարձ, տեղկոմ, քաղղեկ
- 4) Քանաքեռիէկ, ֆիզքիմիկոս, տնտհաշվարկ, սանէպիդկայան

57

Ո՞ր նախադասության մեջ ցուցական հոդ կա:

- 1) Շնորհի՛ր կրկին ողորմությունդ լքվածիս անօգ,
Ամենապարզև տերդ բոլորի...
- 2) Մի ծաղիկը ծիածան չէ, յոթ գույնով եմ ես ցնծում,
Ես մեղուն եմ... Ողջ ազգերը ծաղիկներս են ծաղկոցում:
- 3) Թո՛ղ թափառիկ հովերը պիղծ, մարմնիդ ճամփով մի՛ գնա,
Վերադարձիր սրտիդ ճամփով, որ ողջ սիրտս քեզ մնա...
- 4) Կարծես շատ է քիչ աշխարհիս հողը,
Որ մարդիկ մեռնում ու հող են դառնում:

58

Ո՞ր շարքի բոլոր բայերն են պարզ (առանց բայական ածանցի):

- 1) ամրապնդում է, ավերեցին, կորավ, գալիս եմ
- 2) վայելե՛ք, տասնապատկել են, ա՛ռ, թվացող
- 3) հեռանամ, եկել է, կխոսի, ապացուցել
- 4) ըմբռնչեցին, թիավարում ենք, կժամանեն, իմաստավորում են

59

Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ չկա:

- 1) Հազրոն առավ իր կնոջն ու աղջկան, անցավ լեռից լեռ, քարանձավից քարանձավ:
- 2) Նա հանեց ծիրանի փողը, որով նվագել էր կապույտ լեռների երգը:
- 3) Եղան բռնություններ, թշնամին ձորերով բարձրացավ մինչև նրանց խեղճ խրճիթները:
- 4) Բոցը հասավ դեղնած արտերին, կրակը լափեց և՛ սերմ, և՛ սերմնացան:

60

Բարդ ստորադասական նախադասություններից քանիսի՞ երկրորդական նախադասության բնույթն է ճիշտ նշված:

1. Փքուն, գեղեցիկ բառերի սիրահար հեղինակն ինձ հիշեցնում է գավառացի հարուստ կնոջ, որ գեղեցկության համար բոլոր մատները զարդարում է մատանիներով: *(ուղիղ խնդիր)*
2. Անդրանիկ Ծառուկյանին շատ լավ հայտնի էր, որ թշնամի բանակների բաժանված հայերն իրար հոշոտում են հանուն իրենց շահերի: *(ենթակա)*
3. Տխուր հուշերի հորձանքը վանելու համար Թումանյանը խոսք բացեց այն հերոսական կռիվների մասին, որ մի ժամանակ վարել էր Լոռու գյուղացիությունը պարսիկների ու լեզգիների դեմ: *(վերաբերության անուղղակի խնդիր)*
4. Այն օրերին, երբ Թիֆլիսի բոլոր հայ տղամարդկանց լցրին բանտերն ու արստրեցին, ձերբակալվածների հարազատները հանգիստ չէին տալիս Թումանյանին: *(որոշիչ)*

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:

1. *Քննադատության հանդեպ նրա արհամարհանքը առաջ էր եկել նախկինում անարդարացի ու աչառու քննադատության ենթարկվելուց:*
Քննադատության հանդեպ նրա արհամարհանքն առաջ էր եկել, երբ նախկինում անարդարացի ու աչառու քննադատության է ենթարկվել:
 2. *Թիֆլիսը սիրեց ինձ, փայփայեց ու գուրգուրեց իմ ծննդավայրը մոռանալ տալու աստիճան:*
Թիֆլիսը սիրեց ինձ, փայփայեց ու գուրգուրեց այնքան, որ մոռացա իմ ծննդավայրը:
 3. *Խնդրեցի մի նավաստու իրավիճակի մասին մի երկտող հասցնել հարազատներիս:*
Խնդրեցի, որ մի նավաստի իրավիճակի մասին մի երկտող հասցնի հարազատներիս:
 4. *Հեծյալների՝ Սահակ Սևադայի ապարանքին հասնելուց հետո իշխանը միայնակ առաջ անցավ:*
Երբ հեծյալները հասնում էին Սահակ Սևադայի ապարանքին, իշխանը միայնակ առաջ անցավ:
- 1) մեկը
 - 2) երկուսը
 - 3) երեքը
 - 4) չորսը

Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված պարզի:

- 1) *Նրա երազանքն այն էր, որ դասերը թողնի ու գյուղ վերադառնա:*
Դասերը թողնելն ու գյուղ վերադառնալը նրա երազանքն էր:
- 2) *Սարերում այնքան լուռ է, որ շշուկը մի կիլոմետր հեռավորությունից անգամ լսվում է:*
Սարերում շշուկը մի կիլոմետր հեռավորությունից անգամ լսվելու չափ լուռ է:
- 3) *Նրան պառկեցրին, որ մի քիչ հանգստանա, հետո ճանապարհ գցեցին:*
Նրան պառկեցրին՝ մի քիչ հանգստացնելու և ճանապարհ գցելու համար:
- 4) *Եթե մի քիչ ավելի հեռու լիներ, նրա շարժումները չէին երևա:*
Մի քիչ ավելի հեռու լինելով՝ նրա շարժումները չէին երևա:

Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

- Մենք պատահմամբ ենք ողջ մնացել, պարո՛ն, - ասաց երիտասարդը և ապա ավելացրեց, - այս ամենի մասին հավանաբար մարդիկ Չեզ կպատմեն:

- 1) Երիտասարդն ասաց պարոնին և ապա ավելացրեց, որ իրենք պատահմամբ են ողջ մնացել, որ այս ամենի մասին հավանաբար մարդիկ նրան կպատմեն:
- 2) Երիտասարդն ասաց պարոնին, որ իրենք պատահմամբ են ողջ մնացել, և ապա ավելացրեց, որ այս ամենի մասին հավանաբար մարդիկ նրան կպատմեն:
- 3) Երիտասարդն ասաց պարոնին, որ մենք պատահմամբ ենք ողջ մնացել, և ապա ավելացրեց, որ այս ամենի մասին հավանաբար մարդիկ նրան կպատմեն:
- 4) Երիտասարդն ասաց պարոնին, որ նրանք պատահմամբ են ողջ մնացել, և ապա ավելացրեց, որ այս ամենի մասին հավանաբար մարդիկ իրեն կպատմեն:

64

Նշվածներից ո՞րը չկա ստորև բերված հատվածում (նախադասությունները կետադրված չեն):

Մարդը որ ամեն անգամ հայտնվում էր բեմում ներկայացնելու արտիստի անելիքը չհայտնվեց: Ծափերը բուռն ու պահանջող չէին դադարում: Վերջապես բեմ ելավ արտիստը կանգնեց բեմի կենտրոնում ժպիտներից ամենահրապուրիչը շուրթերին: Հանդիսականների արտիստի դեմքին գամված հայացքներում խտացավ անհամբեր սպասումը:

Արտիստն այս անգամ ընտրել էր տերյանական գոհարներից մեկը «Անդարձություն»:

- 1) դերբայական դարձված
- 2) բացահայտիչ
- 3) տրոհված հատկացուցիչ
- 4) գեղջված ստորոգյալ

65

Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:

Գրական ստեղծագործության մեջ պատկերված դեպքերի, գործողությունների, մարդկային հարաբերությունների ամբողջությունը կոչվում է սյուժե: Սակայն ոչ բոլոր երկերն ունեն սյուժե: Որոշ երկերում կերպարը բնութագրվում է ոչ թե դեպքերի շղթայի մեջ, այլ ուրիշ եղանակներով: Այսպիսի բնույթ ունեն քնարական բանաստեղծությունները:

- 1) գեղարվեստական
- 2) վարչական
- 3) հրապարակախոսական
- 4) գիտական

66

Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

1. *Իշխանադուստր Շահանդուխտը ձորում մի մատուռ է կառուցել տալիս, որտեղ ապաշխարելով ապրում է մինչև կյանքի վերջը, իսկ ժայռը կոչվում է Շահանդուխտի ժայռ:*
2. *Շահանդուխտը՝ իշխանի դուստրը, հրաշագեղ էր, չքնաղ. նրա գեղեցկությունը զարմանք էր պատճառում տեսնողներին: Նայողին թվում էր՝ նյութեղեն չէ, այլ կարծես կերտված է լիալուսնի նրբանուրբ շողերից, արևի թրթռուն ճառագայթներից ու ծաղիկների անուշաբույր նեկտարից:*
3. *Քամու ուժգին հոսանքով ու աներևույթ գործությամբ նա, իր ձիու վրա նստած, անվնաս իջնում է ձորի խորխորատը:*
4. *Մի օր, երբ օրիորդը ուղեկցող խմբով անցնում էր մի ապառաժոտ վայրով, հանկարծ երկնակարկառ քարաժայռի գլխից նրա վրա հարձակվեցին զինյալներ: Եվ որպեսզի չընկնի գայլաբարո ալյազգիների ձեռքը, որոնք Շահանդուխտի հոչակված գեղեցկության պատճառով կամենում էին նրան հափշտակել, օրիորդը խաչակնքում է ու ձիու հետ թռչում քարաժայռից:*

- 1) 2, 4, 3, 1
- 2) 2, 3, 4, 1
- 3) 2, 3, 1, 4
- 4) 3, 1, 2, 4

67

Բնութագրումներից յուրաքանչյուրը ո՞ր հեղինակին է վերաբերում:

- | | |
|---|-----------------|
| ա. Սփյուռքահայ գրականության առաջին ներկայացուցիչներից և ակնաավոր դեմքերից մեկն է, ով առաջինը տազնապահար հնչեցրեց սփյուռքահայերի ձուլման վտանգի սհազանգը և սկզբնավորեց նահանջի ուղղությունը: | 1. Հ. Սահյան |
| բ. Նա ստեղծեց քարափների, ջրվեժների ու ծիածանների մի գունագեղ աշխարհ, որտեղ ապրող մարդը ևս օժտված է իրեն ծնող միջավայրի վեհությամբ: | 2. Հ. Մաթևոսյան |
| գ. Ժամանակակից հայ արձակի ամենախոշոր դեմքերից է, որը արդար կեցության և ազգային գոյի իր փիլիսոփայությամբ, գյուղական կյանքի ուրույն երանգներով հարստացրեց 20-րդ դարի հայ արձակը: | 3. Շ. Շահնուր |
| դ. Նա իր հետ բերեց զանգեզուրյան բնաշխարհի նախնական ու վայրի պատկերները: | 4. Ա. Բակունց |
- 1) ա-3, բ-2, գ-1, դ-4
 2) ա-3, բ-1, գ-2, դ-4
 3) ա-4, բ-1, գ-2, դ-3
 4) ա-4, բ-2, գ-1, դ-3

68

Տրված բանաստեղծական հատվածներից ո՞րը որ հեղինակի ստեղծագործությունից է:

- | | |
|--|------------------------------|
| 1. Ծաղիկներին՝ դեռ չբացված, դեռ չկիզած հոգիներին,
Մանուկներին վառ-խլրտուն ասում եմ ես՝ մնաք բարով: | ա. Մ. Մեծարենց |
| 2. Եվ հառաչեցին լեռները ցավից.
Անեծք ժայթքեցին հրաբուխներով,
Դարձան անդունդներ ու խորանալով
Այն սեզ լեռների տանջանքը լացին... | բ. Վ. Տերյան
գ. Ե. Չարենց |
| 3. Երբ էս հին աշխարհը մտա ես տաղով, սազով քամանչով,
- Ի՞նչ պիտի անե աշխարհում էս անմիտ-անճարը,- ասին: | դ. Հ. Շիրազ |
| 4. Թույլ շրշյուն մը, հետո բույր մը մշկեմի.
Եվ համրագին գիրքը ձեռքես կ'իյնա վար... | |
- 1) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
 2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
 3) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա
 4) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ

69

Բառերից քանիստ՞ւմ և՛ արմատի, և՛ ածանցի հնչյունափոխություն կա.

գիտնական, միջնորդագիր, դատաքննչական, գնդացրորդ, գնացուցակ, նստաշրջան, հայրենասիրություն, երգչախմբային, մրցութային, վայելչադեմ

70

Քանի՞ բառազույգեր են իրար հականիշ.

հոռետես-լավատես, փորձանք-հաջողություն, դիրտ-մրուր, պարծենկոտ-համեստ, երախտագետ-անշնորհակալ, ակնդետ-անթթիթ, ծանուցել-իրագեկել, ակադճուն-լի, պիրկ-թույլ, ուսյալ-իմաստակ, ուխտել-ապխտել, մարմնեղ-գեր:

71

Նշել նախադասության ձևաբանական վերլուծության սխալ տարրերակների քանակը:

Գնացքն ընթանում էր դանդաղ, որովհետև մի տարի չկար, որ երկաթուղու գիծը շինվել էր, և մեքենավարը վախենում էր սպասվող արկածներից:

1. **ընթանում էր** – սահմանական եղանակ, ածանցավոր բայ, **մի** – անորոշ դերանուն
2. **որովհետև** - համադասական շաղկապ, **չկար** – պակասավոր բայ, սահմանական եղանակ
3. **որ** – հարաբերական դերանուն, **երկաթուղու** - գոյական, սեռական հոլով
4. **շինվել էր** - բաղադրյալ ժամանակածև, վաղակատար անցյալ, **վախենում էր** - անկատար անցյալ, չեզոք սեռ
5. **սպասվող** - անդեմ բայ, ենթակայական դերբայ, **արկածներից** - գոյական, բացառական հոլով

72

Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում *և*-ից առաջ ստորակետ պետք է դրվի:

1. Նա անդադրում թափառեց օտար ժողովուրդների հայրենիքներում անպարփակ վիշտը հոգու մեջ և ցավակից եղավ անօգ մարդուն: 2. Առավ նրան իր սրտի մեջ իմացավ աշխարհի բոլոր ծայրերում էլ վիշտը մեկ է և սերը մեկ: 3. Նա հյուսեց բոլորի համար իր երգը եղավ այլևայլ երկրներում և մի օր վսեմափայլ երգիչը հոգնաբեկ վերադարձավ հայրենի տուն: 4. Երգի մրմունջով ելավ Արագածի գագաթը լուսահորդ ու ճերմակափառ և ընկողմանեց թույրիթույր ծաղիկների մեջ: 5. Ճախրում էին ծիածանաթև հավքերի երամները վերը երկնի լագուրում և միմյանց ձայն էին տալիս հոգեթրթիռ դայլայլով: 6. Ներքևում նա տեսավ քաղաքներ շեներ և լսեց հայաբառ չնաշխարհիկ երգը հերկվորի:

73

Ո՞ր շարքերում են սխալ համապատասխանեցված տրված բառերի արևմտահայերեն և արևելահայերեն տարրերակները.

- 1) բարկօղի – կոնյակ
- 2) հավկիթ – ձու
- 3) ալեհավաք – շանթարգել
- 4) աղվոր – գեղեցիկ
- 5) հանրակառք – կառք
- 6) աղեկ – լավ

74

Հովհաննես Թումանյանի «Հայոց լեռներում» բանաստեղծության վեցատողերի վերջին բառակապակցությունները դասավորել ըստ բանաստեղծական տների հերթականության:

1. Սուգի լեռներում, 2. Կանաչ լեռներում, 3. Դըժար լեռներում, 4. Արևոտ լեռներում, 5. Բարձր լեռներում:

75

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ տարրերակներից որևէ մեկը:

1. Շաղկապներն ըստ կազմության պարզ բառեր են:
2. *Սակայն*-ը կարող է կիրառվել և՛ որպես շաղկապ, և՛ որպես վերաբերական:
3. *Թե*-ն կարող է կիրառվել որպես համադասական շաղկապ:
4. *Մինչ, մինչև, մինչև որ, մինչև իսկ* բառերը ստորադասական շաղկապներ են:
5. Շաղկապները երբեմն կարող են դառնալ նախադասության անդամ:
6. Շաղկապները բառային նյութական իմաստ չունեն: